

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 10

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐՆ Է

Թարիքում 20 դրան
Գաւառներում 25 դրան

Ս. Ր. Տ. Ս. Ս. Ս. Ս. Ս.

Ռուսաստան 4 ռբ. 50 կ.

Թուրքիա 50 դրան

Եւրոպա 12 ֆրանկ

Ամերիկա 2 տոլար

Յայտարարութիւնների վճար

Առաջին հրետումը տողաւոր 20 տանի

Չորրորդ 10 . .

Ա.Ռ.Ս.Տ.Ր.Ն. ՀԱՄԱՐ 8 ԵԱՀԻ

Խմբագրութեան հասցեն՝ Թաւրիզ

Միտք-ի Խմբագրութեան կամ Tauris (Perse)

Rédaction du journal arménien „MITK“

Adresse télégraphique-Tauris „MITK“

MITK

ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

Ա.Զ.Գ.Ս.Ի.Ն. — ՀԱՍԱՐԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

اداره روزنامه میطق

Anzeigebblatt fuer Persien

MITK

Propriétaire & Editeur en chef

Al. Der-Vartanian

Le Gérant

Mihran Baghdassarian

TERMS OF SUBSCRIPTION

for a year payable in advance.

20 kran=2.00 Dollars

RATES OF ADVERTISEMENTS:

one printing line on the 1-st page 10 cen.

" 15% discount for annual subscrip-

tion paid in advance. Address

The „MITK“ Publication Co.

Tabriz, Persia

Published by the „MITK“ Publication Co. and Advertising Agency, Tabriz, Persia

Բ. ՏԱՐԻ № 10 ԹԱԻՐԻԶ, ՀԱՐԱԹ 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1913 Թ.

Tauris, Samedi le 1 Novembre 1913 № 10 Vol. II

Ուղում էք անուշահոտ և հաճելի ծխախոտներ՝
ծխեցէք միայն

Եղբարք ՍԵՅԼԱՆՈՎՆԵՐԻ սեփական գործարանի ծխախոտները:

Եղբարք ՍԵՅԼԱՆՈՎՆԵՐԻ ծխախոտի Թաւրիզի բաժան-
մունքում ծախում են:

ԵԳԻՊԵՏՍԿԻ, ԻՐԻՍ, ՓԱՐՈՍ, ՊՐԻՄԱ, ԱՐԻՕԼ և ՄԱՐՍ

պապիրոսները, ընտիր, աժան և վեր աժան տեսակ մրցումից:

Ծխեցէք, փորձեցէք և չէք փոխի այլ ևս ժողովրդականացած
և ընդարձակ գործածութիւն վայելող մեր պապիրոսները:

Ա Ջ Դ

Պրոխորով Մանուֆակտուրական ընկերութեան Թաւրիզի բաժանմունքը
սորանով յայտնում է ի գիտութիւն տեղիս յարգելի հասարակութեան, որ ընկե-
րութեան տեղիս բաժանմունքում ծախում են կորոզով՝ կանխիկ վճարով ամեն
տեսակի մանուֆակտուրական ապրանքներ, մատչելի արժէքով:

Գրասենեակը բաց է, բացի ուրբաթ և կիրակի օրերից, ամեն օր ա-
ռաւոտեան ժամը 9-ից մինչև երեկ. ժամը 4-ը:

باز هم در باب نظافت
شهر تبریز

باز هم لازم می دانیم که در باب نظافت شهر
تبریز مکرراً نوشته و گوشزد حضرت اشرف آقای
فرمانفرمای کل آذربایجان و سایر اولیای محترم نمایم
در ممالک خارجه وقتی که دولت از کثرت
مشاغل و امور ملکی فراغت حاصل نکرده و بامورات
لازمی شخصاً نتوانست مراقبت نماید روزنامه ها
بنا بوظیفه خود علی التوالی بیش نهادها یاد داشت
دولت نموده و منتظر و امیدوار اجرای آنها میباشند
ماهم از انجائیکه حضرت ایالت جلیله را که بنی جز
از ترقی مملکت و پیشرفت تمدن ندارند طرفدار رفاه
عامه و تامین بلاد می دانیم و عجباً! افکار شان به
مفضلات امور اشتغال دارد بنا بوظیفه انسانیت خود
عرایض خودمان را بیش نهاد حضور مبارک شان
مینماییم و مقالاتی که در نمرة گذشته ذکر نموده و
خاطر ایالت جلیله را بدان مستحضر داشته بودیم
دوباره تجدید نموده و منتظر اجرای آن میباشیم:

اولاً — جون بزودی زمستان خواهد آمد
استعدا داریم قدغن سخت فرمایند که آنوقت مردم
برفهای بامهارا به کوچه نیندازند تا این معايرتك
و كیف ازین بیشترتك و تركیف تر نباشد مثلاً ملاحظه
فرمایند در فصل زمستان عبور و مرور كالسهاسهل
است كه اغلب اوقات تردد مردم نیز مستعذر میشود
وقتی كه برفها آب میشوند آنوقت دیگر وضع كثافت
معاير را نمی دانیم بچه زبان عرض كنیم انسان چند
قدم راه كه میرود از سر تا پا غرق كل وآب میشود .
ثانیاً — مقرر فرمایند كه مردم ناودان هارا
مشفوف به كوچه نمایند .
ما منتظریم قبل از آنكه زمستان بیاید حكومت
جلیله بیش نهادهای مارا بموقع اجرا گذاشته و به
كدخدایان قدغن فرمایند تا تدریجاً بامورات نظافت
عملي سرکشی نمایند و خیابانهای را كه بنامه كی تعمیر
كرده اند چندنفد مواظب گذاشته تا در عرض چندروز
بازهم مثل حالت اولی خرابتر نباشد . امید داریم
كه حضرت اشرف فرمانفرمای كل عرایض مارا قبول
فرموده و یادگار بزرگی از خود در ایران گذاشته و
بشرف يك حیات تاریخی قایل گردند

Ա Ջ Դ

Արամեան դպրոցում ծախում են պ. Մ. Արեղեանի «Տարրական Քերականու-
թիւն»-ից բաղ մաթիւ օրինակներ, նաև մի քանի օրինակներ պ. Յ. Տէր-Միրաբեա-
նի «Ժապովրդական դպրոցի մեթոդիկայից» և «Դաստանդութեան ուղեցոյցից»:
Ծախում են նաև «Իրազէտ» I և II մաս, Դիմել տեսուչ՝ Ա. Տ. Վարդանեանին:

ՀԱՍԱՐԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

II

Նախնայեալ համարում գտնուող
լով հասարակական կարծիք հասկացո-
ղութիւնը, վերջում հարց էինք տուել՝

— Նայ արդեօր հայերիս մէջ այդ հա-
սարակական կարծիքը:

— Ոչ, պիտի պատասխանենք մենք:
Փաստենք այդ օրինակներով և մեր տե-
ղին ծանօթ դնուրիք:

Օրինակ, տարիներից ի վեր է որ
կորստեան են մատնուել Վալայի և Լի-
լաւայի դպրոցների դրամագլուխները:

Որքան են պրուել այդ կորուստե-
րի մասին: Ընդամենը տարի
«Միտք»-ում շարունակական ձեռք ու
փաստաթղթից յօդուածներով հասարակու-
թեան առաջ դրուեցին Արամեանի դպ-
րոցի հսկայ դրամական կորուստները,

պարտապանները և այլն: Բայց . . բայց
ո՞վ լսեց: Ո՞վ ժողով պահանջեց: Ո՞վ
ոյժ տուեց թերթի յարուցած հարցին:

— Ոչ որ: Եւ ցարդ, շնորհիւ այդ հանգա-
մանքի, չի իմացում թէ ո՞վ է պատաս-
խանատու այդ կորուստների համար,

ինչո՞ւ պարտապանները չեն վճարում,
ինչո՞ւ այդ կորուստների երեսից դու-
րազ մեր ուսուցիչները չիչ դրամ պի-
տի ստանան և չբաւոր աշակերտները
պիտի միան մերկ ու անզստապիրը և՛
դպրոցը սնանկ ու հոգեվարք:

Պրկնում ենք, եթէ մեր հասարա-
կութիւնը երեսպաշտութիւնը, երկչոտու-
թիւնը, վատամարդ լինելու անպատիւ
դէպիւր մի կողմ չպրտէ և իբրև առողջ
հասարական մի մարմին սիրտ առնէ նե-
ղորձական ձեւով հանդէս գալ և հրա-
մայարար իր կարծիքը լինադրել թէ
այս վնասներն ենք պահանջում, այս
ինչը չենք թողնուում և այլն, և կտես-

նէր որ ոչինչ զեղծում, ոչինչ յափշտա-
կութիւն և ոչինչ բռնութիւն չի կատար-
ուի մեր մէջ:

Սակայն սրովհետև չկայ մեր մէջ
այդ հոգը ձայնը. ուստի՝ միշտ էլ յան-
ցապարտ մարդիկ հրապարակում բարձր
ի գլուխ էլ կատտեն, ազգի փոքն էլ
կուտեն և դեռ խօսողին էլ կհալածեն: Իսկ
դպրոցներն էլ միշտ կմնան սնանկ. ու-
սուցիչները՝ դեբասան, ուսումնական
գործը՝ կաղ, ու մեր վախկոտ, ապիկար
հասարակութիւնը խտտապահանջ, մե-
ծախօս, պարտազանց և ճշմարտահա-
լած:

Վերջին 10-15-ամեակում մեր շա-
ղարում պատահել են շատ տեղի, անե-
րելի, ազգամատ և կորստաբեր գործեր,
որոնք հէնց իրենց սկզբնաւորութեան
մէջ կը խնդրուէին, եթէ մեր մէջ տի-
րող լինէր հասարակական կարծիքը և
հրամայարար որոտար ինքնակոչների ե-
րեսին. «Գնց. մինչև ցայդ վայր և մի ևս
անդը»:

Կայ մեզանում հասարակական կար-
ծիք, միայն ի հակառակէն գործող և
արտայայտուող և կամ միայն թողելի
վերաբերմամբ խօսող:

Կան մեզանում գայթակցուած կա-
նայք, օրիորներ և կործանուած ընտա-
նիքներ:

Ո՛չ մի կարեկցութիւն դէպի տղա-
մարդկանց այդ լճուտ ու անմեղ գո-
հերը: Տեղից վեր կացողը, հասարակա-
կան կարծիք, հալածուած մեղադրում և
ընկերութեան շրջանից վռնդում է մի-
այն թողելին, անպաշտպաններին, տղա-
մարդկանց մեղրածոր խօսքերին ջերմ
հաւատ ընծայող մարբահոգի և անմեղ
այդ գոհերին:

Իսկ բուն մեղաւորները, մոլորիչնե-
րը, յանցապարտ ու իրական պատաս-
խանատուները չըջում են ազատ, բարձր
ի գլուխ, համարում են «դիքերի» և
«պատուի աւել» անձինք և շրջանի «բար-
ձրը մարդիկ»:

Սրանք երեսպետներ են, որ կարող
են տեղի ունենալ միայն հիւանդ ու երկ-
չոտ հասարակութեանց մէջ, որոնց մէջ

Երաժիշտներ և նկարիչներ	80,000
Հիւրանոց-պահպաններ	80,000
Վաճառականներ և խանութ-պաններ	42,000
Հեռագրի և տեղեկօնի հաստա-տու թիւներ	25,000
Բժիշկ և վիրաբույժ հիւններ	11,000
Կերպարանահիւններ	10,500
Խմորագործներ և հեղինակներ	9,500
Վաճառար. պաշտօնեաներ	8,500
Կոմիտեական գործում	80,00

Այս ցուցակում կան գործեր որ ի-զական սեռին այնքան էլ յարմար և վա-րելու չեն, սակայն հազարանգամ աւե-լի նախընտրելի չէ՝ միթէ, որ մի կին կամ օրիորդ փոխանակ իւր մարմինը վա-ճառելու՝ նման կամ այլ գործով զբաղուէ և պատուաւոր կերպով հայրթալթէ իւր ապրուստը:

Ս. Պ.

ԼՈՒՐԵՐ

ԹԵՄԻՔ

Ուսում 17-ին Ս. Էջմիածնից քա-ղաքս ժամանեց թեմիս առաջնորդ Հ. Մե-լիք Բանդեանը:

Յոգուտ Արամեան զպրոցի՝ ամսին 5 ին կայանալիք, ապա մինչև 10 ը լետա-ձգուած և նոյն գիշերը տեղի ունեցած ներկայացումը մուտքի տեսակէտից ան-ցաւ շատ անյաջող: Տոմարները չէին ու-ղարկուած: Սրահը, գրեթէ, դատարկ էր:

Մեզ հաղորդում են, որ Տաճկաց հիւպատոսարանից լայտնել են առաջնոր-դարան, որ այսուհետեւ Տաճկահայատակ հայերին պսակելու հրաման չտան, մին-չև կոնսուլատից վկայական ստանալը: Եթէ միայն ճիշտ է այս լուրը, ապա տարօրինակ է այս իրողութիւնը:

Լուսում ենք, որ Սալմաստից բացի, Ասրպատականի ալ վարելում չկան գործակալական խորհուրդներ: Ուրմիի գիւղերում չկալ և ոչ մի դպրոց:

Համագրային Մեծ Յոգեւանի հանգիստի բացակայում էին Լիւաւիի գպրոցների պ. տեսուչը, բացակայում է-ին և կենտրոնականի ու Լիւաւայի ու-սուցիչներից ոմանք:

Խնդրում ենք պ. պ. բաժանորդներին, որոնց ցրիչը սխալմամբ թերթ տուած չէ լինի, դիմեն պ. Արեւ Բաղդասարեանին:

Սոյն համարում, բանասիրականի բաժնում, տպւում է Արամեան զպրոցի տեսչի տառերի գիտի առթիւ՝ Համագ-րային Մեծ յոգեւանի (Հոկտ. 13-ին) հանգիստի արտասանած ճառը:

Լուսում ենք, կենտրոնականի տոկո-սիքների վճարումը կենտրոնականի հոգա-բարձութեան՝ կարգադրուել է հոգաբար-ձութեան-ցանկալի ձևով: Թեմիս առաջ-նորդից իմացանք, որ կենտրոնականը լի-նելու է այսուհետեւ հոգեւոր դպրոց, որ պատրաստուել է հոգեւորականներ և ուսու-ցիչներ գաւառի համար:

Հոկտ. 11-ին և 12-ին Մեծ յո-բեւանի առթիւ դասերը դադարեցուած էին Արամեան-Ս. Օննայեան երկսեռ

դպրոցներում: 12-ին Արամեան զպրոց-ում տեղի ունեցաւ աշակերտական հան-դէս: Տեսուչը, մի դասախօսութեամբ բացատրեց տօնի նշանակութիւնը, սա-նքին ծանօթացնելով տառերի գիտի և տպագրութեան հետ: Նոյնպէս, լսում ենք, տեղի է ունեցել և կենտրոնակա-նում:

Հոկ. 13-ին ազգային երեք դպ-րոցների աշակերտ-ուհիները բերուել էին Ղալայի եկեղեցին պատարագի: Ուսուցչական խմբիցի միայն Արամեան զպրոցի ամբողջ ուսուցչական կազմն էր ներկայ պատարագին:

Տեղի սղութեան պատճառով Հոկտ. 13-ին Արամեան զպրոցի բակում տեղի ունեցած Մեծ Յոգեւանական հանգիստի նկարագրութիւնը մնաց յա-ջորդ անգամուան:

ԸՏՐՊԸՏԸԿԸՆ

Սալմաստից ստացած մի մասնաւոր նամակից տեղեկանում ենք, որ Նանասորում սպանուել են 4 Էդրուկեցի հայեր:

ՊԸՐՍՈՒՅՈՒՆ

Բախտիարների պարագլուխ Սամ-սամ-էս Սալմանէն, գիշերով անգլիական դիպլոմատիայի պահանջներին, ստան-ձնեց Սպահանի գեներալ նահանգապե-տի պաշտօնը:

ԸՋՂԸՅԻՆ

Հայկական նահանգների բարեկար-գման հարցին հակառակորդ Գերմա-նիան, Պոզոս նուպար փաշայի Բեռլին անցնելուց և բարձր շրջաններին համո-զելուց յետոյ, այժմ կուսակից է հայկա-կան ըէֆօրմների իրականացման:

Լսում ենք էջմիածնում Գէորգ-եան ճեմարանի լսարանական բաժնի ուսուցիչները մեծ ազիտացիա են մղում տեսուչ Բագրատ Եսայի դէմ:

Ժամանակն է, կարծում ենք, որոշ միաբանների վերաբերմամբ վաղուց խորթ մայր ու հալածիչ դառած պաշ-տօնական էջմիածինն իր վեհով հաս-կանան, որ պէտք է վերջ ու վախճան դնել խաղափումների, փրկել ճեմարա-նը անորոշութիւնից և հրաւիրել տես-չութեան պաշտօնին հզօրն ի գիտութիւ-նքս, ներհունն և բազմաճիւղան Կարա-պետ Եպիսկոպոսին, որ միակ արժա-նին է ու յարմարը այդ պաշտօնին իբր ուսումնական մէկը:

ՎԵՐՋԻՆ ՊԱՅՈՒՆ

Ամսոյս 14-ին Պոլսում լանկարձա-մահ է եղել Հ. Յ. Գաշնակցութեան ա մենայայտնի դէմքերից մէկը՝ պ. Ս. Զա-ւարեանը: Հանգուցեալը լեզափոխական ամենահազուագիւտ ազնիւ դէմքերից մէկն էր:

Խմբագրութիւնս լայտնում է իր խո-րին վշտակցութիւնը այդ ցաւալի մահ-ուան առթիւ:

Խմբագիր-Հրաւիրակիչ՝

Ալ. Տէր-Վարդանեան
Տէր-Սիմեոն Բաղդասարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



„ՋԻՆԳԵՐ“
ՀՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՄԵԳԱԶԻՆԻ ՑՈՒՑՆԵԿ

ՓԻՐՍԵՆԻ ԳՐԱՐԱՆ

„ՋԻՆԳԵՐ“ ընկերութեան խանութներում ստացուել են ամեն տեսակ կարիմեքենաներ: Ստացուել է 1913 թուի կատարելագործուած մի մեքենայ 66-ը կլաս կոչմամբ յայտնի, որը իւր մեխանիզմով ամենայայտնի գործածելի մեքենան է: Ծախուում են ինչպէս կանխիկ, նոյնպէս և ամսավճարով, շաքալական ԿԻՆԳ դռան վճարումով ի գիւրութիւն գնողներին:

„ՋԻՆԳԵՐԻ“ խանութում ծախուում են ընկերութեան յատուկ կոճի թիւերը. ամեն մի կոճի բաղկացած է 250 արշին թիւից, հատը 6 շահի, սու-փով՝ 2 դռան 75 կոպէկ:

ANZEIGE

Die Daenische Kolonial Klassen Loterie, vom Staate genehmigt und Kontrolliert.

Ziehung I. Klasse am 16 Jan. 1914.

Der hoechste Gewinn betraegt im gluecklichsten Falle

Eine Million Francs

Nur bar Geldgewinn ohne Abzug!

Von 50,000 Losen oder Numern 21,550 werden mit Gewinn gezogen.

Der Preis der Originallosen betraegt fuer jede Klasse von zu 1600

Krans per Monat, inclusive Porto und amtliche Ziehungsliste.

Die Gewinne werden in dem Anzeigeblatte „MITK“ jedes Mal be-kannt gegeben und die betreffenden Summen von der Daenischen Staats-bank in Kopenhagen sofort ausbezahlt werden.

Bestellungen und Anfragen zu senden an

Mihran Baghdasarian

den bevollmaechtigten Agenten der D. K. L.

Informationsbureau

Tauris. Perse.

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Loterie Coloniale Danoise

10 ՄԻԼԼԻՕՆ ՓՐԱՆԿԻ ՎԻՋԱՎԱՀԱՆՈՒԹԻՒՆ

15-րդ ձրջանը սկսում է 1914 Յունւար 1-ին

Բաղդատումների ընդհանուր քանակն է 50,000

Շահում են 21,550 տոմսակներ կամ նմէքներ. պարգևների համագումարն է 5 միլլիոն 175 հազար ֆրանկ:

ԲԱՂԴԵՐՆԻԴ ՓՈՐՁԵՑԷՔ, ՄԵԾԻ ՇԱՆՍԸ

Քաշուում է ամեն ամսի 15-ին Գօպէնհագում. — տոմսակները արժեն 10 անից մինչև 60 դռան:

Ջահոյ տոմսակների վճարումները լինում են Գօպէնհագնի Պետական Բանկից առանց մի որեւէ գեղջի: Տիրածի ցուցակները ձրի են

Այդպիսի մեծ և ամենավստահի վիճակահանութեան կարող է մասնակ-ցիլ ամեն մարդ ամսավճարով: Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դի-միլ Թուրքիի և ամբողջ Ասրպատականի լիազօրուած գործակալ Միհրան Պաղ-դասարեանին

Information Bureau

Tauris, Perse

Ա Ջ Դ

Սորանով պատիւ ունինք լայտնելու յարգելի հասարակութեան, որ „ՄԻՏԻՔ“ շաքալաթերթը պահելով իւր նախկին սրբօրումը, հանգիստանալու է և իբր օրգան պ. Միհրան Բաղդասարեանի հաստատած Advertising Bureau-ի, որ ընդունում է ամեն տեսակ միջազգային ծանուցումներ և լայտարարութիւններ:

Խմբագրութիւնը պատրաստ է ի գիւրութիւն տեղիս վաճառականների, գը-րել կամ թարգմանել ֆրանսերէն, գերմաներէն, անգլերէն և ռուսերէն նամակներ, որոնք կուղղուին Եւրոպական ֆիրմաների կամ կատարուին այնտեղից: Պայման-ները մասին դիմել խմբագրութեան: